

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒՉԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստորոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեն ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎԱՆԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ղոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Авetik АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

Էլինա Միրզոյան. «Թուրք երեխաների առևանգում և բռնի քրիստոնեացում»-ը՝ թրթրական գիտատեղեկատվական զեղծարարություն..... 156
Elina Mirzoyan. «Abduction and Forced Christianization of the Turkish Children» as the Turkish Scientific and Information Falsification
Элина Мирзоян. «Похищение и насильственная христианизация турецких детей» как турецкая научно-информационная фальсификация

Լիանա Պետրոսյան. Մ. Ահմադինեժադի դեմ ուղղված բողոքները. «Կանաչ շարժում»..... 175
Liana Petrosyan. Protests Against M. Ahmadinejad: «The Green Movement»
Лиана Петросян. Протесты против М. Ахмадинежада: «Зеленое движение»

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Ազատ Դավթյան. Դիտարկումներ Հայաստանի տնտեսության զորահավաքային ներուժի ընդլայնման վերաբերյալ..... 184
Azat Davtyan. Observations on the Expansion of Mobilizational Potential of the Economy of Armenia
Азат Давтян. Наблюдения по расширению мобилизационного потенциала экономики Армении

Լիանա Իսայան. Սոցիալական կապիտալի գնահատման տարբեր մոտեցումները որպես հարցումների այլընտրանք..... 195
Liana Isayan. Different Approaches to the Valuation of Social Capital as an Alternative to Surveys
Лиана Исаян. Различные подходы к оценке социального капитала как альтернатива опросам

Սոս Խաչիկյան. Կառավարման էլեկտրոնային համակարգերի ներդրման անհրաժեշտությունը ինքնակազմակերպվող պետական միավորների միջազգայնացման համատեքստում..... 204
Sos Khachikyan. The Need of Electronic Management Systems Implementation in the Context of Internationalization of State Self-Organizing Entities
Сос Хачикян. Необходимость внедрения электронных систем управления в контексте интернационализации государственных самоорганизующихся образований

Լիլիթ Խուրշուդյան. Հայաստանի և հարևան երկրների ռազմական հզորության գնահատում..... 214
Lilit Khurshudyan. Military Power Assessment of Armenia and Neighboring Countries
Лилит Хуршудян. Оценка военной мощи Армении и соседних стран

Հռիփսիմե Հովսեփյան. ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի հիմնահարցեր..... 222
Hripsime Hovsepyan. Public Sector Internal Audit Issues in Armenia
Рипсиме Овсепян. Вопросы внутреннего аудита общественного сектора Республики Армения

Արմինե Սչանյան. Հանրության պահանջը և սոցիալական բնակարանաշինարարությունը ՀՀ-ում..... 236
Armine Schanyan. Public Demand and Social Housing Construction in the RA
Армине Счанян. Требования общества и социальное жилищное строительство в РА

«ԹՈՒՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՌԵՎԱՆԳՈՒՄ ԵՎ ԲՈՆԻ ԸՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄ»- Ը՝ ԹՐԶԱԿԱՆ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՉԵՂՃԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ^{*432}

ՀՏԴ 9(47.925)

ԷԼԻՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ

*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի
Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի
գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի արևելագիտության
ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
elina-mirzoyan@mail.ru*

Հոդվածի նպատակն է ներկայացնել ու հիմնավորել թրքական գիտատեղեկատվական տիրույթում շրջանառության մեջ դրված այն տեսության պեղծարարությունը, որի համաձայն՝ հայոց ցեղասպանության ժամանակ մուսուլմանների կողմից առևանգված հայ երեխաների և կանանց փրկագործման ընթացքում հայերի, գլխավորապես Պոլսի հայոց պատրիարքարանի աջակցությամբ ու ներգրավվածությամբ հավաքագրվել են նաև մուսուլման թուրք, քուրդ երեխաներ, որոնք ներկայացվել են որպես հայեր՝ սրանով նպատակ ունենալով ավելացնելու հայերի թվաքանակը: Թրքական գիտական ոլորտում այն ձևակերպվում է հետևյալ կերպ՝ թուրք երեխաների առևանգում և բռնի քրիստոնեացում, ինչով ժխտում են հայերի բռնի իսլամացման գործընթացը՝ որպես հայոց ցեղասպանության բաղադրատարր:

Հետազոտության շրջանակում խնդիրը ներկայացված է պատմագիտական անհերքելի սկզբնաղբյուրների համատեքստում, որոնց վերլուծությունը հաստատում է այսպես կոչված «թուրք երեխաների քրիստոնեացում» տեսության չհիմնավորված ու կեղծ լինելը:

Հետազոտությունն իրականացնելիս առաջնորդվել ենք պատմաբնական, համադրական-համեմատական վերլուծության մեթոդներով, որոնց կիրառմամբ հնարավոր է դարձել առավելագույնս բազմակողմանիորեն ու անաչառ փաստել պատմական իրողությունը:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ հայերի կողմից թուրք որբերի առևանգման ու բռնի քրիստոնեացման առնչությամբ թրքական գիտատեղեկատվական պնդումները գիտականորեն փաստարկված ուսումնասիրությունների արդյունքում դիմապերծվում են՝ ներկայացվելով որպես թրքական կողմի կապմակերպած պեղծարարություն՝ խեղաթյուրել բռնի իսլամացած հայ որբերի ճակատագրի իրական ճշմարտությունը և այդպիսով ջուր լցնել հայոց ցեղասպանության թրքական ժխտողականության ջրաղացին:

Հիմնաբառեր՝ հայոց ցեղասպանություն, հայերի բռնի իսլամացում, ազգային ինքնություն, որբեր, որբանոցներ, թրքական պեղծարարություն, Պոլսո հայոց պատրիարքարան:

^{*} Հոդվածը ներկայացվել է 22.06.2020թ., գրախոսվել՝ 24.06.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:
⁴³² Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության պետական կոմիտեի տրամադրած 19YR-6F036 ծածկագրով դրամաշնորհի շրջանակում:

ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ՝ ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՂԻՅՁ

Բռնի ուժացումը՝ որպես հայոց ցեղասպանության բաղադրատարր, Օսմանյան Թուրքիայի կողմից համակարգված ձևով կիրառվել է տարբեր ուղիներով՝ կրոնափոխության հարկադրում, հայ երեխաների հավաքագրում, որդեգրումներ ու բռնի կերպով *խլամական սովորույթների համապատասխան*⁴³³ դաստիարակում, երիտասարդ աղջիկների հարկադիր ամուսնություններ մահմեդական տղամարդկանց հետ: Ոչ մուսուլման ժողովուրդների երեխաների բռնի իսլամացումն ու թրթացումը, ինչպես վկայում են կազմակերպվածությունը, ծավալն ու ժամանակային ընդգրկումը, խորը արմատներ ունեին Օսմանյան Թուրքիայի ներպետական կառավարման քաղաքականության մեջ⁴³⁴:

Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների նկատմամբ օսմանյան իշխանությունների կիրառած պաշտոնական և ոչ պաշտոնական քաղաքականության համաձայն՝ երեխաներին ինչպես հավաքագրել ու հանձնել են պետական թրթական որբանոցներ՝ իսլամացվելու և թրթացվելու նպատակով, այնպես էլ բաժանել են մուսուլման բնակչությանը՝ կրկին նույն նպատակով⁴³⁵, ինչը պաշտոնապես խրախուսվել է:

Անհերքելի է, որ այս գործընթացն ունեցել է պետական քաղաքականության ուղեգիծ. գործընթացը գտնվել է բարձրաստիճան ղեկավարների ու մուսուլման հասարակության տարբեր շերտերի ուշադրության կենտրոնում, ինչի մասին կան բազմաթիվ վկայություններ: Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու թրթացումը կատարվում էին մուսուլման հասարակության կողմից՝ օսմանյան իշխանությունների արտոնմամբ ու խրախուսմամբ: Մուսուլմանների կողմից ներկայացվող հայ երեխաների «*փրկության*» շարժառիթը ոչ թե մարդասիրական, այլ շահադիտական մղումներով է կառավարվել: Խլելով ու ծուլելով հայ երեխաներին՝ թուրք և քուրդ գյուղացիները ձեռք էին բերում թե՛ ձրի աշխատուժե՞⁴³⁶, թե՛ հատկապես հայ աղջիկները համալրում էին կանանոցները⁴³⁷:

⁴³³ **Atnur İ.**, Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meslesi (1919-1923), Ankara, 2005, s. 65.

⁴³⁴ Բռնի կրոնափոխությունը՝ որպես Հայոց ցեղասպանության կառուցվածքային բաղադրիչ, ծրագրվել էր նախօրոք՝ միևնույն տեղահանությունների սկսվելու: Չուլման քաղաքականությունն իրականացվում էր խառը բնակեցումների, քրիստոնյա երեխաներին իսլամադավան ընտանիքներին հանձնելու կամ կառավարական որբանոցներում տեղավորելու, մուսուլման տղամարդկանց հետ հայ երիտասարդ կանանց ու աղջիկների բռնի ամուսնությունների և արտաամուսնական կապերի միջոցով (տե՛ս **Akcam T.**, The Young Turks' Crime against Humanity. The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton University Press, 2012, էջ 287-341, տե՛ս նաև **Sarafian A.**, The Absorption of Armenian Women and Children into Muslim Household as a Structural Component of the Armenian Genocide, In God's Name. Genocide and Religion in the Twentieth Century, ed. by Bartov O. and Mack Ph., New-York, Oxford 2000, էջ 210-211):

⁴³⁵ **Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ.**, Օսմանյան Կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, ՎՄԿ-ՊՐԻՆՏ, 2015, էջ 116:

⁴³⁶ Հրանտ Դինքն այս ուղղությամբ նաև հետևյալ մոտեցումն է արտահայտում, համաձայնի որի՝ այդ ընթացքում գերված հայ երեխաներն ու կանայք օսմանյան իշխանությունների կողմից դիտարկվել են նաև որպես ռազմավար (այս մասին առավել մանրանասան տե՛ս Dink H., İki yakın halk, iki uzak komşu, İstanbul, 2008):

⁴³⁷ **Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ.**, նշվ. աշխ., էջ 131: Հայ երեխաների և կանանց մուսուլման ընտանիքներ և որբանոցներ բռնի տեղափոխման և դրանց դրդապատճառների մասին տե՛ս նաև **Գրիգորյան Յ.**, Չանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլմանաբնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը, Երևան, 2017, էջ 177-204:

Գործընթացին բարձրաստիճանի ղեկավարների անմիջական ներգրավվածության մասին պոլսահայ պարբերաթերթ «Նոր Կեանք»-ը հաղորդում է. «Ընկեր փաշային եղբայրը Պայթումի հրամանատար խալիլ փաշային տունը (Պեշիկթաշ, Համիտին Նախորդ թիւֆենթի պաշը՝ Թահիր փաշային տունը) երեք հայ աղջիկներ կան: Կեց աղջիկներ կան Նաև Շիշլիի Տօթթ Բեշիտ պեյին տունը. ասոնցմէ մին Տիարպեթիրցի Գազազեաններու ազգականն է»⁴³⁸:

Այսպիսի վկայությունները բազմաթիվ են այդօրյա մամուլում: Այսպես՝ «Գարաման գասապ օղլու հաճի Մուսթաֆային քով կը գտնուի 12 տարեկան հայ տղայ մը որուն հայրը և մայրը մեռած ըլլալով թրքացուցած և քովերին պահած են, կը խնդրուի որ զայն ալ ազատեք»⁴³⁹:

Թեև թուրք հեղինակներն իսլամացման քաղաքականությունն անհաջող կերպով փորձում են ներկայացնել որպես խնամքի, կրթության ու դաստիարակության նպատակով որբանոցների հանձնում ու տների բաժանում մարդասիրության համատեքստում⁴⁴⁰, սակայն օսմանյան փաստաթղթերում կիրառված արտահայտության համաձայն՝ նպատակը երեխաների ուժացումն էր⁴⁴¹: 1915թ.-ի հունիսի 26 ամսաթվակիր փաստաթուղթը մանուկների՝ պետության ձեռքով թրքացման վերաբերյալ առաջին փաստաթուղթն է⁴⁴²:

Հայ երեխաների թրքացման պետական քաղաքականության մասին անվիճարկելի տվյալներ են ներկայացված հենց օսմանյան արխիվում, որոնցից մեկի (1915թ. հուլիսի 10-ի թվակիր փաստաթուղթ) համաձայն՝ հրահանգվում է երեխաներին *իսլամական սովորույթներին* համապատասխան բաժանել բարեկեցիկ ընտանիքներին այն գյուղերում ու գյուղաքաղաքներում, որտեղ չկան հայեր...⁴⁴³:

Տեղահանության քարավանները դիտավորյալ չէին հսկվում, ինչի արդյունքում թուրք, քուրդ ու արաբ գյուղական ազգաբնակչությունը բռնի տիրանում էր հայ կանանց ու երեխաներին: Նրանց վաճառում էին, գնում, տանում մուսուլմանական տներ (հաճախ նրա տուն, ով սպանել էր իրենց ընտանիքի անդամներին), պարտադրում կրոնափոխություն: Տեղահանությունների ժամանակ բռնի տեղափոխված հայ երեխաները իսլամացվում էին: Տղաներին թլպատում էին, աղջիկներին բռնի ամուսնացնում, տանում կանանոցներ, անբարո տներ, վաճառում սեռական ստրկության: Միաժամանակ լավ մշակված պետական քաղաքականության համաձայն՝ հայ երեխաները հաստատվում էին պետական որբանոցներում⁴⁴⁴: Հայոց ցեղասպանության ընթացքում մուսուլմանների համայնք բռնի տեղափոխված հայ երեխաների թիվն աննախադեպ էր:

Հայ որբերի՝ ավելի համակարգված ու նպատակային կերպով իսլամացումը շարունակվել է նաև որբանոցներում, ինչը փաստող բազմաթիվ աղբյուրներ կան: Անհերքելի է, որ հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան Թուրքիայում կիրառված բռնի կրոնափոխության գործընթացն իր բոլոր մեթոդներով մշակված և

⁴³⁸ «Նոր Կեանք», Կ.Պոլիս, ուրբաթ, 8 նոյեմբեր 1918, Ա տարի, թիւ 21:

⁴³⁹ «Նոր Կեանք», երեքշաբթի, 17 դեկտեմբեր 1918, էջ 2:

⁴⁴⁰ Տե՛ս **Atnur İ.**, նշվ. աշխ., էջ 52:

⁴⁴¹ **Աբջամ Թ.**, Հայերի բռնի իսլամացումը, Երևան, 2016, էջ 236:

⁴⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 236-237:

⁴⁴³ Տե՛ս **Atnur İ.**, նշվ. աշխ., էջ 65:

⁴⁴⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Գզոյան Է.**, Փրկություն հայ որբերին. Առաքել Կ. Չաքրյանի հուշերը, Տեղասպանագիտական հանդես, Տարի 4, N2, 2016, տե՛ս նաև **Մարգարյան Լ.**, Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918թթ.), Ցեղասպանագիտական հանդես 4(1), Երևան, 2016:

պետության կողմից կանոնակարգված գործընթաց է եղել⁴⁴⁵: Գրեթե ողջ թուրք ժողովուրդը թաթախված էր այս հանցագործության մեջ՝ դրսևորելով ֆանատիզմի ամենաստոր ձևերը, բռնությունները, բռնաբարությունները, խարդախությունները՝ հայ կանանց ու երեխաներին իրենց կողքին պահելու համար⁴⁴⁶:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո պարտված Օսմանյան պետության նոր ղեկավարները ստիպված էին կատարել հաղթող տերությունների որոշակի պահանջները, այդ թվում՝ բռնի իսլամացված կանանց ու երեխաների հայկական ու քրիստոնեական ինքնության վերականգնման ու իրենց համայնքներ վերադարձի պահանջը:

Թրբական իշխանությունների որոշմամբ՝ 1915 թ.-ի հայոց ցեղասպանությունից հետո թուրքերի ու քրդերի տներում պահված հայ որբերի և կանանցներում պահվող հայ կանանց հետագա ճակատագիրը պիտի որոշեր թուրք ոստիկանությունը⁴⁴⁷: Նրանք իբրև թե քննում էին երեխայի հայ կամ քրիստոնյա լինելը: Այս մասին Կոստանդնուպոլսի «Ճակատամարտ» թերթը անվստահություն էր հայտնում՝ կասկածի տակ առնելով քննությունը վարելու նրանց մեթոդներին ու ձևերին: Փաստերի հիման վրա պարբերաթերթը նաև պնդում էր, որ իսլամացված ու թրբացված հայ որբերի, աղջիկների ու կանանց՝ իրենց համայնքին վերադարձնելու գործը ոստիկանությունը ձգձգում էր, և նրանք հիմնականում մնում էին ավազակաբարո թուրքերի կամ քրդերի մոտ՝ «ենթակա պնդումներով բռնաբարություններում կամ բարբարոսության»⁴⁴⁸:

Պետք է նշենք սակայն, որ այս խնդրի լուծումը միջազգային մակարդակի տիրույթում է եղել: Արևելյան ճակատում Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց 1918թ.-ի հոկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրության և դաշնակիցների միջև կնքված Մուդրոսի զինադադարով, որից մի քանի օր անց բրիտանական, ֆրանսիական ու իտալական զորքերը մտան Կոստանդնուպոլիս: Մուդրոսի համաձայնագրի 4-րդ կետը ենթադրում էր օսմանյան պատերազմական գերիների ազատ արձակում, ինչը շատերի կողմից ընդունվեց նաև որպես իսլամացած կանանց ու երեխաների ազատագրման պահանջ: Տարհանված հայերն իրավունք ստացան վերադառնալու իրենց հայրենի տները: Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո հայ որբերի հավաքագրումն ու ազգային պատկանելության որոշումը դարձան բազմաթիվ հայ ու միջազգային կազմակերպությունների ու անհատների առաջնային խնդիրներից: 1918թ.-ի հոկտեմբերին Մեծ վեզիր Իզզեթ փաշայի հրամանով բռնի կրոնափոխվածներին թույլատրվեց վերադառնալ իրենց կրոնին, իսկ որբերին՝ վերամիավորվել իրենց ժողովրդի հետ⁴⁴⁹: Ուժեղ ճնշման ներքո թրբական կառավարությունը հրամաններ է ուղարկում տարբեր տարածքներ՝ պահանջելով «անմիջապես իրենց խնամակալներին կամ համայնքին հանձնել հայ որբերին, աղջիկներին և կանանց, ովքեր գտնվում են մուսուլմանական ընտանիքներում,

⁴⁴⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Չավեն Արքայիսկոպոս**, Պատրիարքական յուշերս.վաերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, էջ 138, **Յովակիմեան Յ.**, Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պեյրուֆ, 1967, էջ 264, **Dadrian V.**, Soykırımın kurbanları çocuklar; **Dadrian V.**, Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler), İstanbul, 2005, էջ 313:

⁴⁴⁶ Տե՛ս LNA, Classement 12, Document 15998, Dossier 4631. Report submitted to the Second Assembly by the 5th Committee. Deportation of Women and Children in Turkey, Asia Minor and the Neighbouring Territories:

⁴⁴⁷ «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918 թ. դեկտեմբերի 21:

⁴⁴⁸ «Ճակատամարտ», Երկու գաղտնիք (տպւն տեղում, 1918, թիվ 27):

⁴⁴⁹ Տե՛ս **Taner A.**, A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York : Metropolitan Books, 2006, էջ 274:

պաշտոնական կամ ոչ պաշտոնական հաստատություններում» սպառնալով իրավական գործեր հարուցել այն անձանց դեմ, ովքեր չեն ենթարկվի վերոնշյալ պահանջին⁴⁵⁰:

Թեև բռնի իսլամացված հայ երեխաներին ու կանանց գտնելու և հավաքագրման, ինչպես նաև իրենց ազգային ինքնությանը վերադարձնելու և կրոնադարձության ուղղված աշխատանքներին մեծապես խոչընդոտել են օսմանյան և՛ պետական մարմինները, և՛ հասարակության մոլեռանդ տարրերը, սակայն այդ գործընթացին ներգրավված են եղել թե՛ օտարերկրյա կազմակերպություններ, անհատներ, թե՛ հայոց գրեթե բոլոր կազմակերպությունները, միությունները, հասարակական դասերի բոլոր ներկայացուցիչները⁴⁵¹: Նշենք, որ Ազգերի լիգայի նախաձեռնությամբ ստեղծվել էր հանձնաժողով, որը ևս զբաղվել է հայ կանանց ու երեխաների վերադարձի խնդրով: 1920թ.-ի օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրի 142-րդ⁴⁵² հոդվածը նույնպես վերաբերում էր Թուրքիայում բռնի իսլամացված քրիստոնյաներին և թույլ տալիս նրանց ազատորեն վերադառնալ իրենց նախկին կրոնին⁴⁵³: 1920թ.-ի դեկտեմբերի 15-ին Ազգերի լիգայի Վեհաժողովը կազմակերպության հորհրդին հրավիրում է ստեղծելու Հետաքննիչ հանձնաժողով՝ պարզելու տեղահանված կանանց ու երեխաների հետ կապված Թուրքիայում, Հայաստանում, Փոքր Ասիայում և հարակից տարածքներում տիրող իրավիճակը: Սակայն նշված երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով Ազգերի լիգայի կողմից նշանակվում է գործին լավ տիրապետող երեք անձ, որոնք գտնվում էին խնդրո առարկա տարածքներում: Միաժամանակ որոշվում է քննությունը սկսել նախ դաշնակիցների տիրապետության տակ գտնվող տարածքներից՝ աստիճանաբար ընդլայնելով հետաքննության տարածքը: Ազգերի լիգայի ներկայացուցիչները պետք է աշխատեին Կոստանդնուպոլսում դաշնակիցների բարձր հանձնակատարների հետ սերտ փոխհամագործակցությամբ, իսկ Ազգերի լիգայի անդամ պետությունները պարտավորվում էին համապատասխան աջակցություն ցուցաբերել և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն⁴⁵⁴:

⁴⁵⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Գզդյան Է.**, Փրկություն հայ որբերին. Առաքել Չաթրյանի հուշերը, Ցեղասպանագիտական հանդես, 4 (2), Երևան, 2016, էջ 162:

⁴⁵¹ «Ճակատամարտ», Ազգային խորհուրդ (նույն տեղում, 1919, թիվ 38):

⁴⁵² Հայոց ցեղասպանության գործադրման ընթացքում երեխաների և կանանց բռնի տեղափոխման և իսլամացման փաստը ճանաչվել է միջազգային մակարդակով: Սևրի պայմանագրի 142-րդ հոդվածը սահմանում է. «Նկատի առնելով, որ 1914թ.-ի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում գոյություն ունեցող ահաբեկչական ռեժիմի պատճառով իսլամացումը չէր կարող տեղի ունենալ նորմալ պայմաններում, և այդ ամսաթվից հետո կատարված դավանափոխությունները չեն ճանաչվում, և այն բոլոր անձինք, ովքեր մինչև 1914թ.-ի նոյեմբերի 1-ը մուսուլման չեն եղել, կդիտվեն որպես ոչ մուսուլման, եթե միայն իրենց ազատությունը վերականգնելուց հետո, նրանք սեփական կամքով չեն կատարի այն բոլոր ձևականությունները, որոնք անհրաժեշտ են իսլամն ընդունելու համար: Պատերազմի ժամանակ...»: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Գզդյան Է.**, Հալեպի Փրկության տունը, Վեմ, Թ Տարի, թիվ 3(59), Երևան, 2017, http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp#art23:

⁴⁵³ **Սիմոնյան Հ.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 378:

⁴⁵⁴ Ըստ Ազգերի լիգայի հանձնակատար Կարեն Եփփեի՝ միջազգային առաքելությունների իրականացրած որոնողական և փրկարարական միջոցառումներից բացի, շուրջ 30.000 հայ դեռևս գտնվում էր Վերին Միջագետքում: Իրավիճակը, սակայն, Կոստանդնուպոլսում ավելի ծանր էր՝ կապված նաև դեպի մայրաքաղաք գաղթականների և որբերի ներհոսքի հետ: Վիլյամ Զենեդին և Էմմա Կուլմանը, որոնք աշխատել էին Օսմանյան պետության տարբեր որբանոցներում, նշում էին, որ «մայրաքաղաքի որբերից 52.500-ը և շուրջ 6.000-ն էլ դաշնակիցների կողմից օկուպացված/զինագրավված Անատոլիայի այլ մասերում հայեր են»: Փաստորեն, ըստ Ազգերի լիգայի ներկայացուցիչների տվյալների՝ մուսուլմանական տարբեր տների և հաստատությունների հայ որբերի թիվը 73.350 էր, որից 60.750-ը գտնվում էր դաշնակիցների կողմից օկուպացված, իսկ

Հանձնաժողովը, որը պաշտոնապես կոչվում էր «Մերձավոր Արևելքում կանանց և երեխաների պաշտպանության հետաքննիչ հանձնաժողով», հեռու էր քաղաքական որևէ նշանակությունից ու բնույթից և գործելու էր զուտ մարդասիրական նպատակներից ելնելով⁴⁵⁵:

Սակայն բռնի իսլամացված հայերի՝ սեփական ազգային ինքնությանը վերադարձնելու գործընթացում ծանրակշիռ դերակատարումը վերապահվել է Պոլսո հայոց պատրիարքարանին: Արևմտահայոց պատրիարք Չավեն Եղիայանի նախաձեռնությամբ ստեղծված Որբախնամ, Տարագրելոց, Նպաստամատույց և այլ հանձնախմբերն ու Հայ կարմիր խաչն սկսում են օգնել ցեղասպանությունը վերապարծներին և տվյալներ հավաքել թուրքերի մոտ ապօրինաբար պահվող հայ կանանց ու որբերի մասին⁴⁵⁶: Պատրիարքարանը նրանց հայ համայնքին վերադարձնելու պահանջով դիմում էր իշխանություններին: Անտանտի ուժերի գործադրած ճնշման հետևանքով Օսմանյան Թուրքիայի Ներքին գործերի նախարարությունը 1919թ.-ի փետրվարի 5-ին հրաման էր ուղարկել գավառներ, որով պահանջում էր «մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին»⁴⁵⁷: Չավեն պատրիարքը և ազգային կառույցները փորձում էին այդ հրամանը կյանքի կոչել, թեև հասկանում էին, որ դա իրականում կեղծիք է: «Ճակատամարտը» գրում էր, որ թեև Ֆերիդ փաշայի օրոք թրքական կառավարությունը արտաքին ճնշումների ազդեցության ներքո հայտարարությունով դիմել էր իսլամ ազգաբնակչությանը՝ հայ համայնքին հանձնելու բռնի իսլամացված հայ որբերին, բայց հստակ էր, որ «կառավարութիւնը չ'ուզէր յանձնել իսլամացուած հայ որբերը»⁴⁵⁸: Այդ հայտարարություն-հրամանն այնպես էր շարադրված, որ յուրաքանչյուր թուրք կարող էր ըմբռնել դրա բուն եությունը, այն է՝ «անշուշտ որ չէք յանձնէր»⁴⁵⁹: Օրաթերթը վկայում էր, որ թուրքերը հայ մանուկների հոգիներն այնպես էին թունավորել, որ կամ քույրն էր եղբորն ասում, թե ինքը հայ չէ, կամ հակառակը: Հարյուրավոր որբուկներ փոթր էին եղել և չէին հիշում իրենց հայ լինելու հանգամանքը: Բազմաթիվ որբեր էլ սպառնալիքի ներքո նրանում էին իրենց ազգությունը⁴⁶⁰:

Այս ուղղությամբ կան բազմաթիվ փաստաթղթային արխիվներ, հուշագրություններ, գիտատեղեկատվական աղբյուրներ՝ թե՛ վերապրողների հեղինակած, թե՛ ուսումնասիրող-հետազոտող-հեղինակների: Սակայն ի հակադրություն այդ պատմագիտական անհերքելի փաստերի՝ թրքական գիտատեղեկատվական տիրույթում թուրք հեղինակները շարունակում են պատմական զեղծարարության փորձերը, ինչպես, օրինակ՝ թուրք որբերի առևանգումը և բռնի քրիստոնեացումը: Մինչ գլխավոր թեմային անդրադառնալը անհրաժեշտաբար հպանցիկ անդրադարձ կատարենք Օսմանյան պետության մեջ որբերի պաշտպանության իրավական

12.600-ը՝ ոչ օկուպացված տարածքներում (տե՛ս Ազգերի լիգայի արխիվ, Classement 12, Document 15100, Dossier 4631):

⁴⁵⁵ Տե՛ս League of Nations Archives, Classement 12, Document 13863, Dossier 4631: Այս մասին առավել մանրամասն տե՛ս նաև **Գզդյան Է.**, Հալեպի Փրկության տունը, Վեմ, Թ Տարի, թիվ 3(59), Երևան, 2017:

⁴⁵⁶ 1919 թ.-ի փետրվարի 28-ին Որբախնամ և Տարագրելոց ընկերությունները միավորվում և կազմում են Հայ ազգային ինսամատարությունը, որը մասնաճյուղեր էր հիմնել Կ. Պոլսի բոլոր թաղերում և բացել էր գաղթականների կայաններ ու որբանոցներ: Հայ կարմիր խաչն անդամակցել է Միջազգային կարմիր խաչին (տե՛ս **Չավեն Արք.**, նշվ. աշխ., էջ 280):

⁴⁵⁷ **Մելքոնյան Ռ.**, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը, Երևան, 2010, էջ 65:

⁴⁵⁸ Թրքական քաղաքականությունը հայոց հանդեպ, «Ճակատամարտ», 1920, թիվ 346:

⁴⁵⁹ Տե՛ս Լույս տեղում:

⁴⁶⁰ Լույս տեղում:

կարգավիճակին, որը թուրք հետազոտողների կողմից ներկայացվում է որպես Օսմանյան Թուրքիայում որբերի պաշտպանվածության փաստագրում:

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՐԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՈՐԲԱՆՆԱՍ ՖՈՆԴԵՐԸ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան Թուրքիայում որբախնամ նպատակով ձեռնարկված միջոցների կառավարման և նրանց պաշտպանության, աջակցության համար ստեղծվում են կազմակերպություններ՝ որբախնամ ֆոնդեր՝ ինսամակալության պարտականությունների ստանձնումով: Օսմանյան հասարակության մեջ որբերը կառավարվում էին ժառանգաբար փոխանցված արժեթղթերի ու շարժական գույքի ինսամակալների կողմից, և կապիտալի վերահսկողության միջոցով ստացված եկամուտները ծախսվում էին այդ անձանց կարիքների բավարարման համար, իսկ անչափահասների պարագայում կառավարվում էին որբախնամ ֆոնդերի կողմից, որոնք կոչվում էին որբերի *քսակներ*:

Այս համակարգը կոչվում էր որբերի տոպրակ/պայուսակ, այն է՝ որբերին ժառանգություն մնացած գումարները, այդ գումարների շահագործման փաստաթղթերը, անշարժ գույքի փաստաթղթերը և նմանատիպ փաստաթղթերը, անձնագրերը տեղադրվում էին տոպրակի մեջ (գործվածքից պայուսակ կամ տոպրակ): Երբ որբերը դառնում էին չափահաս, այդ պայուսակների մուտքը դադարեցվում էր, և ժառանգություն մնացած հասույթը նրանց փոխանցվում էր վկաների ներկայությամբ⁴⁶¹:

Երեխաների բնագավառում Թանզիմաթի (բարեփոխումների, օրենսգրքի) արդիականացման դրսևորումներից մեկն *Էմվալ-ի* Էյթամ Նեգարեթիի վարչակազմի ստեղծումն էր, որն ուղղված էր որբ երեխաների ունեցվածքի վերահսկողությանն ու պաշտպանությանը: Որբ երեխաների ունեցվածքի, գույքի պաշտպանության համար դեռևս 1851թ.-ի դեկտեմբերի 31-ին⁴⁶² հրահանգվում է առաջին նիզամնամեն՝ կանոնադրությունը, համաձայն որի՝ շեյխուլիսլամի ենթակայությամբ որբերի գույքի կառավարման վարչակազմ է ստեղծվում Էյթամ Նեգարեթին, որը հոգ կտաներ որբերի գույքի մասին: Այն առաջին հաստատությունն էր, որը ստեղծվել էր Թանզիմաթի շրջանակում երեխաների գույքի և նրանց այլ իրավունքների պաշտպանության նպատակով: Այն, համագործակցելով պետության համապատասխան այլ ստորաբաժանումների հետ, ամենաուշը 4 ամսվա ընթացքում փոխանցում է որբերի գույքը, որն ավելի հուսալի պայմաններում ի պահ էր հանձնվել մինչև նրանց չափահաս դառնալը⁴⁶³: Այս հաստատությամբ որբերի իրավունքների խնդիրը թեև որոշակիորեն

⁴⁶¹ Cafer Ç., “Osmanlı Devleti’nde Yetim Keseleri”, Kültür Dergisi, Sayı:12 (Sonbahar 2008), s. 47. Տե՛ս նաև Yazıcı N., "Tanzimat Döneminde Yetim Mallarının Korunmasına Yönelik Yasal Düzenlemeler ve Bazı Uygulamalar." Vakıf Haftası Dergisi, 12(1995), Ankara/<http://acikerisim.fsm.edu.tr:8080/xmlui/bitstream/handle/11352/1066/Yaz%C4%B1c%C4%B1.pdf?sequence=1&isAllowed=y>, <http://www.manevisosyalhizmet.com/wp-content/uploads/2015/10/sosyal-hizmete-giris-2.pdf> (ղխտվել է՝ 07.06.2020):

⁴⁶² Düstur , vol. 1 , İstanbul, 1289, s. 270-275.

⁴⁶³ Տե՛ս Yazıcı N., "Tanzimat Döneminde Yetim Mallarının Korunmasına Yönelik Yasal Düzenlemeler ve Bazı Uygulamalar." Vakıf Haftası Dergisi, 12(1995), Ankara/<http://acikerisim.fsm.edu.tr:8080/xmlui/bitstream/handle/11352/1066/Yaz%C4%B1c%C4%B1.pdf?sequence=1&isAllowed=y>, <http://www.manevisosyalhizmet.com/wp-content/uploads/2015/10/sosyal-hizmete-giris-2.pdf> (ղխտվել է՝ 07.06.2020):

իրավական հարթակում էր կարգավորում ստանում⁴⁶⁴, սակայն դրանց խախտման օրինակները շատ էին:

Առաջին նախարարի պաշտոնավար է նշանակվել Թահսին Բեյը: Կենտրոնը Սուլեյմանիեն էր, սակայն գործունեությունը սկսել է Բաբ-ը Ալիից: 24 ծառայող ուներ, փոխնախարարը նաև գլխավոր քարտուղարն էր⁴⁶⁵: Գործունեության մեկ տարին չլրացած՝ անվանափոխվել է՝ ստանալով «Որբերի միջոցների կառավարման տնօրենություն» անվանումը⁴⁶⁶, ինչպես նաև տնօրենն է փոխվել: Կառույցը տարբեր անուններով է շարունակել իր գործունեությունը, իսկ արկղիկները գոյություն են ունեցել մինչև 1910թ.-ը⁴⁶⁷, սակայն թուրք հետազոտողներից շատերը նշում են, որ որբերի գույքի տնօրինման ու պաշտպանման օրենքները, գործունեության մոդելը/ձևը շարունակել են գործել երկար ժամանակ, ենթադրաբար նույնիսկ հայոց ցեղասպանության ժամանակ, սակայն հերթող կամ փաստող հավաստի աղբյուրներ գրեթե չեն հանդիպում, այդուհանդերձ քննվող թեմայի շրջանակում նրանց կողմից այս թեման շեշտադրվում է՝ որպես Օսմանյան Թուրքիայում որբերի պաշտպանվածության ցուցիչ:

«ԹՈՒՐԵ ԵՐԵՆԱՆԵՐԻ ԱՌԵՎՆԳՈՒՄ ԵՒ ԲՈՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄ»-Ը՝ ԹՐԶԱԿԱՆ ԳԻՏԱՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՉԵՆՃԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԺՆՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ըստ թրքական աղբյուրների)

Ինչպես արդեն նշել ենք, թուրք հետազոտողների կողմից թրքական տներում երեխաների տեղաբաշխումը և որբանոցներում բաժանելը ներկայացվում են իբրև մարդասիրական քայլ՝ նրանց խնամքի, կրթության ու դաստիարակության նպատակով՝ իհարկե, այդպիսով ժխտելով հայ երեխաների բռնի տեղափոխությունը հայոց ցեղասպանության բաղադրատարր լինելը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին⁴⁶⁸ Օսմանյան պետությունում որբ և որբացած հայ երեխաների ինսամատարությամբ զբաղվելու պարտականությունը տրվում է Կրթության նախարարության կազմում հիմնված Դարուկ-ի Էյթամի/Որբանոցի⁴⁶⁹ ղեկավարությանը/տնօրենությանը:

Ըստ թրքական բազմաթիվ աղբյուրների՝ 1916թ.-ի մարտի դրությամբ ողջ երկրում շահագործման է հանձնվել 69 միավոր Դարուկ-ի Էյթամ: Իսկ 1917թ.-ին այստեղ 11.680

⁴⁶⁴ “Eytam İdaresi”, Türk Ansiklopedisi, Cilt XVI, 1968, Ankara: M.E.B., s. 56. Տե՛ս նաև **Karataş Z.**, Osmanlı Devletinde Korunmaya Muhtaç Çocuklara Yönelik Sosyal Hizmet Uygulamaları/ Recep Tayyip Erdoğan Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Sosyal Hizmet Bölümü, İstanbul, 2016. Տե՛ս նաև **Şahin F.**, “Eytam Sandıklarının Kuruluşu ve Konuyla İlgili Yapılan Yasal. Düzenlemeler”, Ankara Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Tarih (Yakınçağ Tarihi) Anabilim Dalı, Ankara, 2017/ https://dSPACE.ankara.edu.tr/xmlui/bitstream/handle/20.500.12575/33790/furkan_sahin.pdf?sequence=1 (ղիտվել է՝ 05.06.2020):

⁴⁶⁵ **Eryüksel A.**, Osmanlı Devletinde Dul ve Yetimler, *Şarkiyat Mecmuası, İstanbul 1998*, c.VIII, s. 334.

⁴⁶⁶ **Şahin F.**, “Eytam Sandıklarının Kuruluşu ve Konuyla İlgili Yapılan Yasal. Düzenlemeler”, Ankara Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Tarih (Yakınçağ Tarihi) Anabilim Dalı, Ankara, 2017/ https://dSPACE.ankara.edu.tr/xmlui/bitstream/handle/20.500.12575/33790/furkan_sahin.pdf?sequence=1 (ղիտվել է՝ 05.06.2020); https://dSPACE.ankara.edu.tr/xmlui/bitstream/handle/20.500.12575/33790/furkan_sahin.pdf?sequence=1

⁴⁶⁷ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶⁸ Թուրք բազմաթիվ հեղինակների կողմից շեշտադրված արտահատչաձև՝ հայոց ցեղասպանության ընթացքում որբացած և հավաքագրված պատմական իրողությունը շրջանցելու դիրքերից:

⁴⁶⁹ Նաև հանդիպում են որբատուն, որբերի բույն տարբերակները:

երեխա է գտնվել⁴⁷⁰: Կառավարությունը հետևողականորեն գաղտնագիր/ծածկագիր հեռագրեր էր հղում վիլայեթներ և մուլթասարրըֆներին(սահանգի կառավարիչներին)⁴⁷¹ մանկատներին աջակցելու ցանկությամբ⁴⁷¹:

Այդուհանդերձ, թուրք հեղինակների ընդգծմամբ՝ երբ երկարատև պատերազմի տարիներին տարբեր ազգային պատկանելությամբ որբերի քանակը մեծացավ, որբանոցների քանակը սկսեց չբավարարել⁴⁷². Նման իրավիճակում որբ երեխաների մեծ մասի խնամքը մնում է բարեգործական, բարեսիրական կազմակերպությունների խնամատարության ներքո՝ Հիմայե Էթֆայ, Հիլայի Ահմեր, Կանասնց զբաղվածության միության նման կազմակերպություններին⁴⁷³, որոշներն էլ թուրք ընտանիքների հովանու ներքո հանձնվեցին⁴⁷⁴: Չինադադարի ստորագրմամբ և Ստամբուլի զինագրավմամբ բրիտանական մանդատի հետևանքով աջակցություն ձեռք բերած հայերը և նրանց թերթերը սկսեցին պնդել, որ պատերազմի տարիներին Դարուլ-ի Էյթամներում և թուրք ընտանիքների հովանու ներքո գտնվող երեխաներին ծուլման քաղաքականության են ենթարկել: Հայկական «Նոր Կենսք» թերթը Անտանտի տերություններին ուղղված ֆրանսերեն մի նամակ է հրատարակում թրքական տներում հայ որբերին փրկելու ուղղությամբ⁴⁷⁵: «Սաբահ» թերթի 1919թ.-ի հունվարի 9-ի համարում ասվում է, որ քրիստոնյա կին ու երեխաներ են բռնի պահվում⁴⁷⁶, մեկ այլ թրքական «Ենի Ստամբուլ» թերթի համաձայն՝ հայ երեխա աղջիկներ են իթթիհատական առաջնորդների տներ բաժանվել: Դիարբեքրի⁴⁷⁷ նահանգապետ Ռեշիդ Բեյի մոտ 7, Հայիլ Փաշայի մոտ 3 երեխա են պահվում⁴⁷⁸:

Բրիտանական ղեկավարությունը, հիմնվելով այդ թերթերի հրապարակումների վրա, պահանջում է Օսմանյան կառավարությունից այդ երեխաներին գտնել և հայ առաջնորդական մարմիններին հանձնել: Ներքին գործերի նախարարությունն այդ հարցի առնչությամբ բազմաթիվ ծածկագիր հեռագրեր է ուղարկում վիլայեթներ, գավառներ, ինչպես նաև մուլթասարրըֆներին: Հեռագրերում առաջարկվում է որբ և որբացած հայ երեխաների գտնվելու վայրերը հայտնել հայ հոգևոր առաջնորդներին...⁴⁷⁹:

Ըստ թուրք հեղինակների՝ հայերն այդ գործընթացում ակտիվանում են անգլիական կողմի պաշտպանությամբ, ինչպես նաև շեշտադրում են , որ այդ ընթացքում Հայոց պատրիարքարանի՝ այդ գործին անմիջականորեն ներգրավված լինելն էլ արդեն ակնհայտ էր: 1919թ.-ի ապրիլին Քոնիայում արտասահմանյան անձնագրեր կրող Մ. Դեմիրճյան, Կ. Արսանյան, Ն. Դոպյան և Կ. Քեշիշյան անուններով անձինք հարցաքննվել

⁴⁷⁰ Nedim İ., “Birinci Dünya Savaşı Esnasında Karadeniz ve Doğu Anadolu’da Cereyan Eden Göçler”, Ondokuz Mayıs Üniversitesi Eğitim Fakültesi Dergisi, S.12 /1 (Mayıs 1999), Samsun, s. 191–192.

⁴⁷¹ BOA, Dahiliye Şifre Kalemi (DH.ŞFR), 54 / 150, Maarif-i Umumiye Nezaretinden Vilayet ve Mutasarrıflıklara Şifre (13 Haziran 1331).

⁴⁷² Տե՛ս Duman Ö., *Ermeni Araştırmaları, Sayı 16-17, Kış 2004-İlkbahar 2005/ http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=Dergicerik&IcerikNo=15&fbclid=IwAR1Da-hXc6XpTEWrFSsPwUHMN7NKey_u88JdnV7eTGBw5-kmBi6H8DloJ9E* (դիտվել է՝ 09.06.2020):

⁴⁷³ Karakışla Y., “Kadınları Çalıştırma Cemiyeti Himayesinde Savaş Yetimleri ve Kimsesiz Çocuklar “Ermeni” mi, “Türk” mü?”, *Toplumsal Tarih*, S. 69 (Eylül 1999), s. 46-47. Çetinkaya S., *Tehcir Sonrası Müslüman Çocuklara El Konulması Meselesi*, Tarih Dergisi, Sayı 65, İstanbul, 2017.

⁴⁷⁴ BOA, DH. ŞFR. 54-A / 325, Dahiliye Nezaretinden Halep Valisi Bekir Sâmî Bey’e şifre (27 Temmuz 1331). ; BOA, DH. ŞFR. 68 / 95. Dahiliye Nezaretinden Kayseri Mutasarrıflığına şifre (10 Eylül 1332).

⁴⁷⁵ Haberi aktaran Söz, 17 Teşrin-i Sani 1334 (17 Kasım 1918).

⁴⁷⁶ Sabah, 9 Kanun-ı Sâni 1335 (9 Ocak 1919).

⁴⁷⁷ Տիգրանակերտ:

⁴⁷⁸ Yeni İstanbul, 9 Kanun-ı Sâni 1335 (9 Ocak 1919).

⁴⁷⁹ BOA, DH. ŞFR. 94 / 56. Dahiliye Nezaretinden Adana Vilayetine şifre (9 Kanun-ı Evvel 1334).; BOA, DH. ŞFR. 95 / 163. Dahiliye Nezaretinden vilayet ve mutasarrıflıklara şifre (18 Kanun-ı Sâni 1335).

են իրենց գործունեության պատճառով⁴⁸⁰: Հարցաքննության ընթացքում պարզվում է, որ այդ մարդիկ պատրիարքի կողմից որբահավաքության հանձնառություն են ունեցել⁴⁸¹. «1919 թ. առաջին ամիսներից սկսած՝ հայ համայնքի ղեկավարները և պատրիարքարանի կողմից նշանակված մարդիկ Անատոլիայի տարբեր վայրերի որբանոցներում՝ թուրք երեխաների հայ լինելու պնդումներով Ստամբուլ ուղարկվեցին»⁴⁸²: Կայսերիի նահանգապետարանի հաստատմամբ՝ պատերազմում ծնողներին կորցրած 310 թուրք երեխա Կայսերիից ուղարկվել է Ստամբուլ: Այս երեխաները Հայդարփաշա հրապարակում կոմիտեական հայերի կողմից վերցվել են, հրապարակային ճանապարհով փողոց են դուրս բերվել և տարվել-հանձնվել են Բեյոլլուի Բալլըբազար եկեղեցուն՝ քրիստոնեացնելու միտումով⁴⁸³: Ստամբուլի կառավարության ջանքերի արդյունքում 182 երեխա հետ է բերվել⁴⁸⁴: Այդ երեխաներին բաժանեցին որբանոցի տնօրենությանը կապված Օրթաթոյ, Իմրահոր, Չաղլայան, Բերեթ, Բեյթոզ, Կալիդեբադ, Բալմուսջու և Հասթահանե մասնաճյուղերին⁴⁸⁵:

Այս դեպքից հետո՝ 1919թ.-ի փետրվարի 20-ին, Ներքին գործերի նախարարությունը հրահանգեց նահանգների կառավարչություններին որբանոցներում հայ համայնքի ներկայացուցիչների և Հայոց պատրիարքարանի ծառայողների գործունեության դեմ ուղղված նախազգուշացում անել, համաձայն որի՝ թույլ չտալ, որ թուրք փախստական և տարագիր երեխաներին այսուհետ ոչ մուսուլմանների պնդումներով ու պահանջով վերցնել⁴⁸⁶:

Մինչդեռ, ինչպես շարունակում է թրթրական կողմը, հայկական հանձնաժողովի անդամները Ստամբուլում հանդիպումներ էին ունենում: Քեմալեթթին Շյուբրյուի⁴⁸⁷ հիշատակություններում Նիշանթաշում կայացած հավաքին մասնակցել է նաև բրիտանացի ռազմական կցորդ Ուինդհամ Դիեդեյը՝ Դոկտոր Թոփչյան անունով մի կոմիտեականի առաջարկով Ստամբուլում հայ երեխաների հավաքագրման պատվրակով թրթրական տներ մտնելով ստանալ թուրք որբերին, և դա հարմար է եղել բոլորի համար⁴⁸⁸: Հիշատակության մեջ խոսվում է մի միջադեպի մասին. Եյուփթեում՝ Չընար փողոցում բնակվող Ֆահրյունիսա անունով մի կնոջ (որի ամուսինը սպանվել էր Չանաքթալեում) 7-ամյա որդուն բռնի կերպով վերցրել էին Հայոց պատրիարքարանի աշխատակիցները բրիտանացի ոստիկանների օգնությամբ և մկրտելու համար եկեղեցի

⁴⁸⁰ BOA. DH. EUM. AYŞ. 4 / 16. Konya Vilayetinden Dahiliye Nezareti'ne arz tezkiresi (9 Nisan 1335).

⁴⁸¹ BOA. DH. EUM. AYŞ. 4 / 16. Konya Vilayetinden Dahiliye Nezareti'ne arz tezkiresi (9 Nisan 1335).

⁴⁸² **Duman Ö.** *Ermeni Araştırmaları*, Sayı 16-17, Kış 2004-İlkbahar 2005/ http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=DergiIcerik&IcerikNo=15&fbclid=IwAR1Da-hXc6XpTEWrFSsPwUHMN7NKey_u88JdnV7eTGBw5-kmBi6H8DIoJ9E (ղիտվել է՝ 09.06.2020):

⁴⁸³ Başbakanlık Cumhuriyet Arşivi (BCA), 030.10 / 108.709.7. Büyük Millet Meclisi İcra Vekilleri Heyet-i Riyâsetinden Doktor Adnan Bey'e tahrirat (28.12.1338).; Cemiyet-i Akvam ve Türkiye'de Ermeni ve Rumlar, Muhacirin Müdiriyyet-i Umumiyesi Neşriyatından: 6, İstanbul 1337, s. 40-41.

⁴⁸⁴ BCA, 030.10 / 108.709.7. Büyük Millet Meclisi İcra Vekilleri Heyet-i Riyâsetinden Doktor Adnan Bey'e tahrirat (28.12.1338). Թուրք քաղաքական ու հասարակական գործիչ Չելալ Բայարի հուշագրության և Ներքին գործերի նախարարության կից Տարագրյալների տնօրենության վերոնշյալ աշխատության համաձայն՝ այդ երեխաների թիվը հասնում էր շուրջ 339-ի, որոնցից պարզապես 165-ն են վերադարձվել: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Cemiyet-i Akvam ve Türkiye'de Ermeni..., էջ 41, Celâl B., Ben de Yazdım, c. 5, İstanbul 1967, էջ 1503:

⁴⁸⁵ Cemiyet-i Akvam ve Türkiye'de Ermeni..., s. 45-46.

⁴⁸⁶ BOA. DH. ŞFR. 96 / 248. Dahiliye Nezaretinden vilayet ve mutasarrıflıklara şifre (20 Şubat 1335).

⁴⁸⁷ Լրագրող, վիպագիր:

⁴⁸⁸ **Kemalettin Ş.**, Mütareke Acıları, Selâmet Matbaası, İstanbul 1930, s. s. 70-74.

տեղավորել⁴⁸⁹: Թրքական զեղծարարության դիրքերից 1919թ.-ի առաջին օրերից սկսած՝ Քեմալեթին Շյուբրույի փոխանցած դեպքի նման շատ դեպքեր ի հայտ եկան: 1919թ.-ի հունվարի 12-ին հայ կոմիտեականները ֆրանսիացի զինվորների հսկողության ներքո հայ աղջնակի թաքցնելու համար Մաքըրթյուն (Բաքըրթյուն) բնակվող թոշակառու բժիշկ քայմաբամ Իսմայիլ Թևֆիկի տունն են խուզարկում⁴⁹⁰: Այս դեպքից ընդամենը վեց օր անց հայ կոմիտեականները հազարապետ Քեմալ Բեյի տուն են ներխուժում՝ նրա դուստր Շերիֆեին տանելու այն պատրվակով, որ նա հայ է⁴⁹¹:

1919թ.-ի մարտի 26-27-ին Արևավոթյունում հազարապետ Սուլեյման Բեյի, Իսկութարում Դոկտոր Զյամիլ բեյի, Օրթաթյունում Մուբաաթի հանձնախմբի նախագահ Շեքիբի և Բաքըրթյունում Մյուլազիմ Մեհմեդ Նուրի Բեյի աղջիկները կրկին հայ լինելու համոզմամբ (այս անգամ ևս հայերի պահանջով) պատրիարքարանի հանձնակատարների կողմից բռնությամբ վերցվել են⁴⁹²:

Սակայն ի հակակշիռ թրքական այս մասնակի կեղծ թվարկումներին՝ հայ երեխաների բռնի իսլամացման քաղաքականությունը վկայող անհաշիվ օրինակներ կան փաստագրված: Ապա նույն ժխտողական դիրքորոշմամբ շարունակում են, որ նման իրադարձությունների զանգվածայնությունից հետո ոստիկանության Ստամբուլի բաժինը համապարփակ զեկույց է ներկայացրել՝ ներքին գործերի նախարարությանը 1919թ.-ի ապրիլի 28-ին⁴⁹³: Չեկույցում նշվում է, որ բրիտանացիների հսկողության ներքո մեկ ամերիկացուց, մեկ թուրքից և մեկ հայից բաղկացած պատվիրակություն է կազմվել որբահավաք գործունեության համար՝ ուղղված պատերազմական տարիներին թրքական ընտանիքներ և խնամատար կազմակերպություններին հանձնված որբացած ու անտեր հայ երեխաների ազգային իրական ինքնությունը պարզելուն⁴⁹⁴: Դաշնակից ուժերի օգնությամբ այդ պատվիրակությունը թուրք երեխաներին տարավ որոշ թրքական տներից՝ այն պնդմամբ, որ նրանք հայեր են, առանց թրքական ոստիկանության հետ խորհրդակցելու, և նրանց տեղավորեց պատրիարքարանի որոշած վայրում: Գյուլյու և Ջեմիլե անունով երկու աղջնակի, Չեկույցում բնակվող հազարապետ Աբդիլի Բեյի աղջկան՝ Նիմեթին և Ջևրի անունով մի թուրք աղջկա բռնությամբ վերցնելով՝ պատրիարքարանում են տեղավորել: Չեկույցի շարունակության մեջ նշվել է, որ այդ երեխաները որևէ առնչություն չունեն հայերի հետ, և նման դեպքերը պետք է կանխել, դրանց կանխումը հասարակական կարծիքի ու խղճմտանքի մեղմացման համար է, ինչպես նաև Անտանտի պետություններում անհրաժեշտ է գործողություններ ձեռնարկել⁴⁹⁵:

1919թ.-ի մայիսի 22-ին ոստիկանության տնօրենությունն իր տեղեկանքում նույն ինդրի վերաբերյալ որոշ տեղեկություններ է տալիս՝ ներքին գործերի

⁴⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 75-76:

⁴⁹⁰ BOA. Dahiliye Emniyet-i Umumiye 6. Şube (DH. EUM 6. Şb.). 47 / 61 (12 Kanun-ı Sâni 1335)

⁴⁹¹ BOA. DH. EUM. AYS. 48 / 11 (17 Kanun-ı Sâni 1335).

⁴⁹² BOA. DH. İUM. (Dahiliye Nezareti İdare-i Umumiye), 19-7 / 1-5 . İstanbul Polis Müdiriyet-i Umumiyesinden Dahiliye Nezareti'ne arz tezkiresi (6 Nisan 1335).

⁴⁹³ BOA. DH. KMS. 52-2 / 79 İstanbul Polis Müdiriyet-i Umumiyesinden Dahiliye Nezareti'ne arz tezkiresi (28 Nisan 1335). **Karakışla Y.**, “Kadınları Çalıştırma Cemiyeti Himayesinde Savaş Yetimleri ve Kimsesiz Çocuklar “Ermeni” mi, “Türk” mü?”, Toplumsal Tarih, S. 69 (Eylül 1999), s. 49-51. ; **Türkmen Z.**, “İşgal Yıllarında İstanbul’daki Uygulamalar: Mütareke Döneminde Ermeniler Tarafından Türk Çocuklarının Kaçırılması ve Hıristiyanlaştırılması”, KÖK Araştırmalar, c. II, S. 2 (Güz 2000), s. 270-274.

⁴⁹⁴ **Halide E. A.**, Türk’ün Ateşle İmtihanı. Atlas Kitabevi. İstanbul 1979. s. 22-23

⁴⁹⁵ **Duman Ö.**, Ermeni Araştırmaları, Sayı 16-17, Kış 2004-İlkbahar 2005/
http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=DergiIcerik&IcerikNo=15&fbclid=IwAR1Da-hXc6XpTEWrfSPwUHMN7NKey_u88JdnV7eTGBw5-kmBi6H8DloJ9E (նիսվել է՝ 09.06.2020):

Նախարարությանը⁴⁹⁶: Ըստ վերոհիշյալ տեղեկանքի՝ տնօրենությունը պատրիարքարանից խնդրել է մեկ մարդու միանալ հանձնաժողովին, որը ձևավորվել է բրիտանացիների հսկողության ներքո, և որի խնդիրն էր որոշել կասկածելի երեխաների ազգային պատկանելությունը, և Չաբյան էֆենդին⁴⁹⁷ է նշանակվել պատրիարքարանի կողմից: Չրպարտանքների ուղեգծին հավատարիմ թրքական կողմը նշում է, որ Չաբյան էֆենդին, շատ երկար չանցած, սկսում է անկախ գործել, նա եկել է Կանանց զբաղվածության միության գլխավոր կենտրոն, վերցրել է նոթատետրը՝ արձանագրելու այն որբերի տեղեկանքը, որոնք տեղավորված էին տներում: Թեև անցել էր երեք ամիս, սակայն նոթատետրը չհանձնվեց միությանը. նոթատետրում գրի առնված թուրք երեխաներին ևս պատրիարքարանի հանձնակատարները բռնի կերպով վերցնում էին: Ըստ ոստիկանության տնօրենության՝ հավաքագրված երեխաներին բերում են Բեյոլլուում պատվիրակության կողմից պահվող մի տուն, որտեղ նրանց իբր բռնի բրիտոնեացիներ են:

Ներքին գործերի նախարար Ալի Զեմալ Բեյը 1919թ.-ի մայիսի 24-ին գրություն է ուղարկել սադարեթին՝ սադրագամին՝ պահանջելով, որ լուծում գտնվի. այդ իրադարձությունները մտցվեն Մեջլիսի Կյուբեյլայի՝ Meclis-i Vükela/Նախարարաց ժողով (խորհուրդ) օրակարգ⁴⁹⁸: Այն գումարվել է 1919թ.-ի մայիսի 28-ին: Այդուհանդերձ, հավաքի ընթացքում ընդունված որոշումները հեռու էին Ալի Զեմալ Բեյի պահանջները բավարարելուց. «Միայն որոշվեց, որ Ստամբուլում ոչ մահմեդական երեխաները քարերով հարձակվում են թուրք երեխաների վրա, նաև շեշտվում է, որ ոստիկանության ուժերը պետք է կանխեն նման միջադեպերը»⁴⁹⁹:

Թրքական արխիվային գրառումներն իբրև թե ցույց են տալիս, որ իրենց ներկայացրած իրադարձությունների նման դեպքեր տեղի են ունեցել նաև 1919 և 1920 թվականներին: Օրինակ՝ 1919թ.-ի հոկտեմբերի 27-ին Շեհզադեբաշընդայում մթերայինի խանութպան Թևֆիկ Էֆենդին խնդրագիր-նամակով բողոքել էր նույնատիպ իրավիճակի մասին՝ հղված Ներքին գործերի նախարարությանը: Համաձայն խնդրագրի՝ շուրջ 8 ամիս առաջ Թևֆիկ Էֆենդիի դուստրը՝ Սենիյեն, որպես հայուհի տարվել է Պոլսո հայոց պատրիարքարանի ներկայացուցչի գլխավորությամբ, իսկ Թևֆիկ Էֆենդին կարողացել է փրկել դստերը՝ ոստիկանության պետին ներկայացնելով փաստաթղթեր ու վկաներ: Այժմ պատրիարքարանի՝ Կարաբեթ/Կարապետ անունով սպասավորը մի շարք փորձեր է ձեռնարկել ոստիկանության վարչությունում, որպեսզի որոշում կայացնի այն մասին, որ Սենիյեն հայ է և, հետևաբար, պետք է հանձնվի պատրիարքարանին: Թևֆիկ Էֆենդիին

⁴⁹⁶ BOA. DH. KMS. 52-2 / 79 İstanbul Polis Müdiriyet-i Umumiyesinden Dahiliye Nezaretine arz tezkiresi (22 Mayıs 1335). Karakışla Y., “Kadınları Çalıştırma Cemiyeti Himayesinde...”, s. 50-51. ; Türkmen Z., “İşgal Yıllarında İstanbul’daki...”, s.271-273.

⁴⁹⁷ Խոսքն Առաքել Չաբյանի(1885–1954) մասին է: Նա փարիզաբնակ անվանի գիտնական, քիմիկոս և գյուտարար էր,1948թ.-ին՝ Փարիզի ակադեմիայի ակադեմիկոս: Ֆրանսիական ու հունական կառավարությունների կողմից արժանացել է Պատվո լեգեոնի և Սուրբ Գևորգի ասպետական աստիճանների: Վարել է նաև բարեգործական, աղքատախնամ ու եկեղեցական պաշտոններ. «Բրիտանական բարձր հանձնաժողովի անդամ արև Սմիթի օժանդակությամբ Առաքել Չաբյանը նույնպես լծվեց հայ որբերի հավաքագրման գործին: Ստեղծվեց Որբահավաք մարմին՝ 4 անդամներով՝ Ա. Չաբյանի ղեկավարությամբ: Նրանցից յուրաքանչյուրը բրիտանական դեսպանատան կողմից ստացավ հանձնարարագիր՝ ուղղված Դաշնակցական ոստիկանությանը՝ անհրաժեշտության դեպքում օժանդակություն ապահովելու համար» (տե՛ս **Գզոյան Է.**, Փրկություն հայ որբերին. Առաքել Չաբյանի հուշերը, Ցեղասպանագիտական հանդես, 4 (2), Երևան, 2016, էջ 164):

⁴⁹⁸ BOA. DH. KMS. 52-2 / 79. Dahiliye Nezaretinden Sadarete arz tezkiresi (24 Mayıs 1335). **Karakışla Y.**, “Kadınları Çalıştırma Cemiyeti Himayesinde...”, s. 51.; **Türkmen Z.**, “İşgal Yıllarında İstanbul’daki...”, s. 273.

⁴⁹⁹ BOA. Meclis-i Vükela Mazbataları (MV.) 215 / 129 (28 Mayıs 1335).

այդ որոշումը հասել է ընդամենը 10 օր առաջ, որից հետո վերջինս օգնություն է պահանջել⁵⁰⁰: 1920թ.-ի դեկտեմբերի 18-ին հայկական Մուավենեթ-ի միլիյեի⁵⁰¹ ծառայողներ Կարապետ և Պողոս Էֆենդիները, նախկին շեյխուլիսլամ Մուսա Քյազըմ Էֆենդիի տուն ներխուժելով, Չաջեր անունով աղջկան հայուհի լինելու պնդումով բռնությամբ վերցրել են⁵⁰²:

Թուրքական կողմը նշում է, որ դարձյալ այդ ժամանակահատվածում նկատվում է, որ միսիոներները և հայկական հանձնախմբերն Անատոլիայից Ստամբուլ են ուղարկում թուրք երեխաների՝ նրանց բռնի անջատելով իրենց ընտանիքներից: Փաստորեն, 1919թ.-ի հուլիսի 15-ին Ստամբուլի ոստիկանությունը կարողացավ փրկել 4 դստերն այն թրքական ընտանիքներից, որոնք Բուրսայում գտնվող ամերիկյան միսիոներների և հայկական հանձնախմբերի կողմից բռնի տեղափոխվել էին թրքական ընտանիքներից⁵⁰³: ՆԳՆ-ի ճշգրտումների համաձայն՝ Ադանայի Քոզանում բնակվող Շևքի Մուսլուհի աղջիկ Ասիյեն կրկին բռնի տեղափոխվել է Ստամբուլ և նրան պահել են Շիշլիի տանը⁵⁰⁴: Ստամբուլի մանկատներում զինադադարի շրջանում Դարուլ-ի Էյթամի իշխանությունների իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 319 երեխա հայ են եղել, որոնք փոխանցվել են հայ հոգևոր առաջնորդներին ու հարազատներին: Չաղլայանի որբանոցում իրականացված հետազոտություններում 18 երեխայի, որոնք շատ երիտասարդ են և չունեն որևէ մեկին, ով կարող է ճանաչել նրանց ազգությունը, հայերը վերցրել են: Դարձյալ այդ ժամանակահատվածում առանց որևէ ապացույցի՝ հայերի՝ Իմրահորի, Բեբեթի, Օրթաթյոյի, Յեդիկալեի, Չաղլայանի, Բեթթոզի, Բալմուճցուի և Բահչեջիկի մանկատներից վերցրած 42 երեխային վերադարձրել են՝ նրանց թուրք լինելն ապացուցելուց հետո: Տասնչորս երեխա, որոնք թուրք են եղել, առևանգվել են հայերի կողմից՝ փոխելով անունները⁵⁰⁵:

Թուրք երեխաների հետ կապված իրադարձությունները, որոնք հավաքվել էին Թուրքիայի ընտանիքներից Անատոլիայում և Ստամբուլում, ինչպես նաև պատրիարքարանի կազմում, մտան Մեջլիսի Կյուբեյայի օրակարգ 1921թ.-ի դեկտեմբերի 21-ին: Հանդիպման ավարտին այդ ամսաթվին գրված արձանագրության մեջ կառավարությանն ու ոստիկանությանն առաջարկվել է ուսումնասիրել դրանք և անել հնարավորը՝ ելնելով բողոքներից, որ թուրք որբերից մի քանիսը տրամադրվել են հայ և հույն մանկատներին, իսկ մի քանիսը՝ քրիստոնյա ընտանիքներին՝ որպես ծառաներ⁵⁰⁶:

Թուրք հեղինակների անհիմն պնդումներով՝ այդ ընթացքում շատ թուրք երեխաներ, որոնք չունեին ազգային ինքնության և կրոնական գիտակցություն, բռնի տեղահանվեցին իրենց ընտանիքներից՝ պնդելով, որ իրենք հայ են և փորձում էին քրիստոնեանալ եկեղեցիներում ու մանկատներում: Անհնար է, որ բոլոր այդ երեխաները

⁵⁰⁰ BOA. DH. EUM. AYŞ. 25 / 10. Dahiliye Nezareti'ne arz (27 Teşrin-i Evvel 1335).

⁵⁰¹ Մուավենեթ-ի միլիյե (Muâvenet-i Milliye) նավատորմի տեսակ է՝ կառուցված հատուկ օսմանյան Թուրքիայի համար Առաջին համաշխարհային պատերազմից առաջ:

⁵⁰² BOA. DH. İUM. 19-15 / 1-34. İstanbul Polis Müdiriyet-i Umumiyesi'nden Dahiliye Nezareti'ne arz tezkiresi (9 Kanun-ı Sâni 1337).

⁵⁰³ BOA. Dahiliye Seyrû Sefer Kalemi (DH. SSM), 37 / 59 (15.7. 1335).

⁵⁰⁴ BOA. DH. EUM. AYŞ. 53 / 64. Dahiliye Nezaretinden İstanbul Polis Müdiriyeti'ne tezkire (22 Mayıs 1337).

⁵⁰⁵ Cemiyet-i Akvam ve Türkiye'de Ermeni..., s. 43-45.

⁵⁰⁶ BOA. MV. 222 / 207 (21 Kanun-ı Evvel 1337).

վերադարձվելին, ուստի շատ թուրք ընտանիքներ մնացել են անասելի տառապանքների մեջ⁵⁰⁷:

Նմանատիպ անհեթեթ տեղեկություններով արշավ է սկսվել նաև թրքական մամուլում, սակայն տեղի հայկական մամուլը կարողացել է հակադարձել փաստագրություններով:

«Մենայեր»⁵⁰⁸-ի մեջ Նշանթաշըում բնակվող թրքուհի Նաջիե Ֆեխամը գրել է, իբրև թե Զոնիայից վերադառնալու ճանապարհին իր հետ է բերել 13-14 տարեկան թուրք աղջնակի, որին հայերը փախցրել են: Նա զարմացած գրում է, թե ինչ հանդգնություն ու համարձակություն ունեն այդ հայերը. «Այ մեր ոստիկանությունը գրեթե գործունեություն չունի: Կը վախնամ որ վաղը ինձի ալ փողոցը կը գտնեն և բռնի դուն հայ ես ըսելով պատրիարքարան կը տանին: Հայերը իմ ծանօթներես շատերու մօտ իբր հոգեզաւակ գտնուած իսլամ տղաքներուն ետեւէն առջեւէն կը պատին»⁵⁰⁹: Ի պատասխան այդ հայտարարության՝ «Նոր Կեանք»-ի խմբագրականը գրում է. «Նաջիե Հանըմ կրնայ վստահ ըլլալ թէ հայերը երբեք՝ քիւրտ կամ թուրք աղջիկները իբր Հայ աղջիկներ վար դնելու ոչ նպատակ ունին և ոչ ալ փափաք: Ո՞ր հայուն սիրտը պիտի ներեր առիկա, եթէ Նոյնիսկ ի վիճակի ըլլար իր որբերէն զատ օտարներու ալ պահելու»⁵¹⁰:

Ընդհանրապէս պետք է նշել, որ այս և նման զրպարտիչ ու խեղաթուրող թրքական պնդումներին ի հակակշիռ՝ ունենք հազարավոր այնպիսի օրինակներ, ինչպէս՝ «Մի փոքր աղջիկ՝ Աֆիֆ Զեն (Afife Djen) անունով, վերցվել էր բրիտանացիների կողմից շեյխ Նուրուլ Էֆենդիի (Nurull effendi) տնից: Ենթադրվում էր, որ նա հայ է: Աղջկան վերադարձնելու պահանջներին ի պատասխան՝ թրքական կառավարությունը, մինչև նրան Չեզոք տուն հանձնելը, երեք օր պահել էր բանտում՝ ահաբեկելով նրան: Թրքական կառավարությունը պնդում էր, որ աղջիկը պետք է վերադարձվի՝ պահանջը հիմնավորելով կեղծ ծննդյան վկայականով և շեյխի այն պնդումներով, որ աղջիկը մուսուլման է: Չեզոք տուն ժամանելուց հետո աղջիկը դիմադրում էր: Երեկոյան Չաքրյանը նրան հարցնում է. «Ինչու՞ չես պատմում ճշմարտությունը: Տեսնում ես, թե որքան ենք տանջվում պարզելու համար՝ ով ես: Եթե պատահի, որ մայրդ վերադառնա և փնտրի քեզ, ի՞նչ ենք նրան պատասխանելու: Եթե վերադառնաս թրքական տուն, կարո՞ղ ես պատկերացնել, ինչ ահավոր տխուր կլինի քո մայրը»: Իսկ աղջկա այն հարցին, թե գուցե մայրը մահացել է, Չաքրյանն ասաց. «Չգիտես, որ մեր մահից հետո կա այլ կյանք, որտեղ մենք բոլորս հանդիպելու ենք, և այդ ժամանակ քո մայրը տեսնելով, որ մահմեդական ես դարձել, չի գրկի քեզ: Նա քեզ հետ կվանի»: Աղջիկը, չդիմանալով մոր սիրո մտքին, խոստովանում է ողջ ճշմարտությունը. «Իմ անունը Վիրջին է: Մի օր հանկարծակի իմ հորս ու մորս ուժով վերցրին մեր տնից և մյուսների հետ ուղարկեցին անհայտ ուղղությամբ: Միայն ես մնացի, և նրանք ինձ տարան Կոստանդնուպոլիս և

⁵⁰⁷ Duman Ö, Ermeni Araştırmaları, Sayı 16-17, Kış 2004-İlkbahar 2005/ http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=Dergiler&IcerikNo=15&fbclid=IwAR1Da-hXc6XpTEWrFSsPwUHMN7NKey_u88JdnV7eTGBw5-kmBi6H8DloJ9E (դիտվել է՝ 09.06.2020):

⁵⁰⁸ Թրքական այս թերթը հրատարակվում էր «Թանին»-ի փոխարեն Թալեաթի, Էսվերի բարեկամ Ֆեթիհի նախաձեռնությամբ: «Կը յիշէք թէ ո՞վ է Ֆեթիհի-այն թունդ իթթիհատականը, ով Իզզեթ փաշայի (ան ալ թունդ բայց սմսեղուկ իթթիհատական) օրով ներքին գործոց նախարար եղաւ, և Իզզեթի, ե թերեւս նաեւ Ծերտկոյտի նախագահ Ահմետ Րիզայի (ան ալ թունդ իթթիհատական) մեղակցութեամբ փախցուց Թալաթը, Էսվերը, Ազմին և Պետրին» («Նոր Կեանք», չորեքշաբթի, 25 դեկտեմբեր 1918):

⁵⁰⁹ «Նոր Կեանք», երկուշաբթի, 23 դեկտեմբեր 1918:

⁵¹⁰ Տե՛ս նույն տեղում:

տվեցին Չաղջա անունով մի չար մարդու, ով ինձ միշտ ասում էր, որ եթե հայ դառնամ, կսպանեն ինձ, ու ես դժոխք կգնամ»⁵¹¹:

Երիտթուրքական առաջատար պարբերաթերթ «Թանին»-ը «Չայ որբերն ալ կը մեկնին» խորագրի ներքո գրում է. «Չայերը ո՞վ գիտե մեզի դեմ ինչպիսի բոբոբականտ մը ես ընելու նպատակաւ, սկսած են Պոլսոյ որբանոցները պարպել և իրենց տղաքը Երոպա և Ամերիկա դրկել»⁵¹²:

Մեկ այլ թերթ «Իգտամ»-ը գրում է. «Կեսարիայէն չորս տարի առաջ Չայերուն Պոլիս բերուած որբերուն մէջ 240 իսլամ տղաքներ կային: Այս տղաքը ետ առնելու համար կապարուած ձեռնարկները առաջ կը տարուին: Այժմ Չայերուն ձեռքը 600ի չափ թուրք որբեր կան: Մինչև հիմա անոնցմէ հազիւ յիսուն հատ հայ որբանոցներէն կարելի եղած է առնել: Ոստիկանությունը քննութեան ձեռնարկած է թուրք տղոց ինքնութիւնը կ'արձանագրէ: Մինչև հիմա ուրջ կին և այլ ոստիկանութեան դիմած են Չայերուն ձեռք գտնուող իսլամ տղաքը ազատելու համար»⁵¹³:

«Իլերի»-ին ևս անմասն չի մնում գեղծարարության փորձերից. «Չայոց ձեռքը մնացած մեր տղաքը ազատելու համար յանձնաժողով մը գործի ձեռնարկելու վրայ է: Յայտնի ըլլալով թէ այդ տարաբախտ տղոցմէ 3-400ը Պուկարիա և Յունաստան դրկուախ են, մեր պաշտօնեաներէն մեկը այն կողմերը պիտի երթայ այդ տղաքը փրկելու համար:

Չինադադարին կնքումէն և դաշնակից տերութեանց վարչութեան Պոլսոյ մէջ հաստատուելէն ետք, հակառակ անոր որ ընտանիքներու մօտ և պաշտօնական հաստատութիւններու մէջ գտնուած բոլոր հայ տղաքը պատկանեալ մարմիններու յանձնած էին, այս յանձնումը չկրցաւ գոհացնել և հանդարտեցնել հայերուն վրեժխնդրական ոգին:

Իբր թէ չէզոք կերպով հայ տղաքը պիտի գատուէին թուրք և քիւրտ որբերէն: Այս նպատակաւ Շիշլիի մէջ, պեօլիքտերէ ճատտեսիի վրայ 32-33 թիւ շէնքը վարձուեցաւ և չէզոք տունի վերածուեցաւ և անոր վարչութիւնը 5-6 հայ պաշտօնեաներու յանձնուած պահուն, խորհուեցաւ թուրք կին մըն ալ պաշտօնի կոչել: Այս պաշտօնը յանձնուեցաւ Թուրքիոյ Կարմիր Մահիկի անդամներէն Նեզիհէ հանըմի:

Չայերը իսկոյն գործի սկսան: Դաշնակից տերութեանց ոստիկաններու ընկերակցութեամբ հայ պաշտօնեաները Թուրքերու տուները գացին, ներս մտան «Այիշէ, Ֆաթմա կամ Էմինէ անունով աղջիկ մը կայ, պիտի տանինք» ըսին և անոնց ծնողներուն կամ պաշտպաններուն սրտաճմլիկ աղաղակներուն մէջ տղաքը Չէզոք Տուն⁵¹⁴ դրկեցին»⁵¹⁵:

⁵¹¹ LNA, Classement 12, Document N 9640, Dossier 4631, The Orinet News, August 08, Vol 2, №46. Տե՛ս նաև **Գոյան Է.**, Փրկություն հայ որբերին. Առաքել Չաբոյանի հուշերը, Ցեղասպանագիտական հանդես, 4 (2), Երևան, 2016, էջ 173-174:

⁵¹² «Վերջին լուր», Կ.Պոլիս, հինգշաբթի 30 նոյեմբեր, 1922:

⁵¹³ «Որբերուն խնդիրը», «Վերջին լուր», 9 թղ. Տարի, թիւ 2634, 1 նոյեմբեր, 1922 թ., էջ 3:

⁵¹⁴ 1919թ.-ի ապրիլին Դաշնակից պետությունների նախաձեռնությամբ՝ որբահավաք աշխատանքներ կատարելու որոշում է կայացվում. հավաքել որբերին Կ.Պոլսում (մենք կիրառում ենք Կ.Պոլիս տեղանվանաձևը՝ փոխարեն Ստամբուլի)՝ չէզոք մի վայրում: Էդիրնետում, Բուրսայում, Զոնիայում և Զըրքլարելիում թողեցին մեկական որբանոցներ, մյուս որբանոցներում ապաստանած երեխաներին տեղափոխեցին Կ.Պոլիս: Թուրք որբուկները հանձնվելու էին Օսմանյան անվտանգության տնօրենությանը, իսկ հայ մանուկները՝ Պոլսոյ հայոց պատրիարքարանին: Այդ նպատակով Կ.Պոլսի Նիշանթաշ թաղամասում մի տուն վարձակալվեց: Չէզոք այդ վայրը այդպես էլ կոչվեց՝ «Չէզոք տուն»: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ավագյան Լ.**, Չէզոք տուն. Ինքնությունը վերագտնելու վերջին հնարավորությունը/<https://hetq.am/hy/article/106444> (դիտվել է՝ 21.12.2019):

⁵¹⁵ «Չիմակ ալ Չէզոք տունի պատմութիւնը կը խեղաթիւրուի», «Վերջին լուր», 10րդ. Տարի, թիւ 2822, 12 յունիս, 1923 թ., էջ 2:

Նույն թերթը զեղծարար նպատակային ուղեգծով շարունակում է. «Սկիզբները երբ Նեզիհե հանրմի իր պաշտօնը կատարելու համար կանոնաւորաբար կը յաճախէ չէզոք տունը, տեսնելով որ հայ պաշտօնեաները մերթ խստութեամբ, սպառնալիքով ու ծեծով և մերթ անուշ խօսքերով ու գեղեցիկ... վերջապէս ամէն միջոցի դիմելով ու ամէն խարդախութեան զիջանելով որբերը բռնի կը հայացնեն և քրիստոնէութիւնը ընդունիլ կու տան անոնց, բողոքեց անգլ. յանձնաժողովին: Բայց տեսնելով որ այս վատ դրութիւնը փոխանակ ջնջուելու աւելի խստացուած էր, ցաւով հրաժարեցաւ իր պաշտօնէն ու սա խօսքերը ընելով հեռացաւ այդ չարագուշակ հաստատութենէն. «Հոս չէզոք տուն չէ, այլ մեր աչքերուն առջեւ մեր տղաքը Հայ և քրիստոնէայ ընելու ծառայող պարաբեհանէ մըն է...»: Նեզիհե հանրմի հրաժարումէն ետք, Շիշլիի չէզոք տունը, մէկ հակակշռէ և քննութենէ գերծ ըլլալով, սկսաւ գործել այն չարիքները, որոնք չորս տարիէ ի վեր կը շարունակուին...: Այսօր անոնք հայ որբանոցներու, հայ վարժարաններու մէջ, մէկ մասը Հռոմի և մէկ մասը Ամերիկայի մէջ Թուրքիին դէմ թշնամութիւն սնուցանել կը սովորին: Վաղն ալ անոնք մեր դէմը պիտի տեսնենք իբրև արիւնտու ու ոճրապարտ գործիքը Դաշնակներուն, Հնչակներուն, Դրօշակներուն, այսինքն մահափորձի, պօմպայի, ոճիրի մարմնացումը եղող հայ խռովարար ընկերութիւններուն»⁵¹⁶:

Եզրակացություն

Այսպէս, փաստորեն, թրքական կողմը գիտատեղեկատվական շրջանառության մէջ է դրել զեղծարար այն միտքը, համաձայն որի՝ մուսուլմանների կողմից առևանգված հայերի ազատման ընթացքում Պոլսի հայոց պատրիարքարանի աջակցությամբ և ներգրավվածությամբ հավաքագրվել են նաև մուսուլման թուրք, քուրդ երեխաներ, և նրանք ներկայացվել են որպէս հայեր՝ այսկերպ նպատակ ունենալով ավելացնելու հայերի թվաքանակը⁵¹⁷: Թրքական գիտական ոլորտում այդ կեղծիքը ձևակերպվում է այսպէս՝ թուրք երեխաների առևանգում և բռնի քրիստոնէացում:

Այսպիսով՝ հայտնի և արդէն փաստարկված իրողություն է, որ 1922թ.-ի հունիսի 2-ի՝ Ազգային պատվիրակության հաշվեցույցի տվյալների համաձայն՝ 1918թ.-ի Մուղղոսի գիւնադարից մինչև 1921թ.-ի դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում Կ. Պոլսում հավաքվել էր 1.536.157 օսմանյան ոսկի որբերի ու տարագրյալների համար⁵¹⁸: Մինչև 1922թ.-ը Կ. Պոլստ հայոց պատրիարքության ջանքերով ստեղծված հանձնախմբերի աշխատանքի շնորհիվ բռնի ծուլումից փրկվել և հայ համայնքին են վերադարձվել հազարավոր հայ որբեր և առևանգված ու բռնի իսլամացված կանայք ու աղջիկներ: Մասնավորապէս, Առաքել Չաբոյանի գլխավորությամբ գործող Որբահավաք մարմինը 1919թ.-ի մայիսից 1921թ.-ի դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում «Չէզոք տուն» կոչվող կառույցի հետ «Պոլսոյ մէջ գտնուած գրեթէ 4-5000 որբերէն 3000-ը ազատեր է թուրքերու քովէն»⁵¹⁹: Գավառներում գտնվող հայ որբերի մեծամասնությունը «մնաց թուրքերուն ձեռքը. Հարիւր հազարաւոր որբերէն շատ քիչերը կարելի եղաւ ազատել»⁵²⁰: Պատրիարքարանը 1921թ.-ի սկզբներին զեկույցի տեսքով ամփոփել է իր Որբախնամ և Որբափրկիչ ծրագրերի արդյունքները՝ նշելով, որ 63.000⁵²¹ հայ որբեր դեռևս մնում էին մուսուլմանական ընտանիքներում⁵²²: «Ճակատամարտը» տեղեկացնում էր, որ 1922թ.-ի դրությամբ 25.000 հայ որբ կար ԱՄՆ-ում, 400-ը՝

⁵¹⁶ Նույն տեղում:

⁵¹⁷ **Basyurt E**, *Ermeni Evlatliklar*, Istanbul, 2006, s 44-45.

⁵¹⁸ **Չավէն Արք.**, նշվ. աշխ., էջ 282-283:

⁵¹⁹ Նույն տեղում, էջ 292:

⁵²⁰ Տե՛ս Նույն տեղում:

⁵²¹ Տես նաև **Atnur İ.**, նշվ. աշխ., էջ 219-220:

⁵²² **Չավէն Արք.**, նշվ. աշխ.:

Գերմանիայում, 15.000-ը՝ Յունաստանում, 400-ը՝ Հունում, 200-ը՝ Ռումինիայում, 1000-ը՝ Բուլղարիայում, 5000-ը՝ Սիրիայում, 40.000-ը՝ Խորհրդային Հայաստանում⁵²³:

Ամփոփելով Նշենք, որ թրթալկան պնդումներին ու զեղծարար գիտատեղեկատվությանը, թե իբրև հայերի կողմից թուրք որբեր են առևանգվել և բռնի քրիստոնեացվել, սպառնչ պատասխան է տալիս ինտրի հետազոտմամբ զբաղվող արևելագետ Ռ. Մելթոնյանը: Նա փաստում է, որ որպես թուրք կամ բուրդ մուսուլման ներկայացվող երեխաները մանուկ հասակում իրենց արմատից կտրված և մի քանի տարի մոյի իսլամական ոգով դաստիարակված հայ երեխաներն էին, որոնց մեջ գրեթե բացակայում էին հայկական ծագման հիշողությունն ու գիտակցությունը⁵²⁴:

Թրթալկան խեղաթուրված իրողությունը բացահայտվում է իր ողջ ճշմարտությամբ ընդհանրական երևույթը ներկայացնող Նաև Ջելիլ անվանափոխված և բռնի իսլամացված հայուհի Սիրանուշի պատմությամբ, որը հազարավոր օրինակներից մեկն է: Ըստ այդմ՝ հազարավոր հայ որբուկներից մեկին՝ «փոքրիկ Բրունին կոչում էին Ջելիլ: Աղջիկը լացում էր և պնդում, որ ինքը մահմեդական է, որ իր ծնողներն ու եղբայրները սպանվել են հայերի կողմից, և միայն ինքն է ողջ մնացել, որ այս մասին իրեն ասել էին որբանոցում: Եվ միայն երբ Չաթրյանը երգվում է իր ծնողների և Աստծո անունով, որ կվերցնի աղջկան որպես իր երեխա, Բրունը պատմում է իր պատմությունը. «Մեր գյուղը սարի լանջին էր: Յուրաքանչյուր գյուղացի այնտեղ իր ագարակն ուներ, և բոլորը հարուստ էին: Իմ հայրն ամենահարուստն էր: Մի առավոտ գյուղի բոլոր տղամարդիկ և տղաները իմ հոր և եղբայրների հետ հավաքվեցին կարմիր գծավոր տաբատներով մարդկանց (թուրք ժանդարմների/ոստիկանների) կողմից: Օ՛, ես երբեք չեմ մոռանա՝ ինչ դաժան և չար տեսք ունեին այդ մարդիկ: Երբ մտածում եմ նրանց մասին, վախից դողում եմ: Որքան էի ինտրում նրանց վերադարձնել հորս, բայց նրանք խփում էին և հեռու քշում ինձ, նրանք չէին խոճում նույնիսկ փոքր երեխաներին: Տղամարդկանց և տղաներին ծեծելուց հետո նրանք կապեցին նրանց երկուական և տարան, չգիտեմ ուր: Օ՛, որքան էի սիրում իմ հորը: Նա այնքան բարի էր ու մեղմ: Ամեն կիրակի մենք գնում էինք եկեղեցի, և քահանան, ով երկար սպիտակ մորուք ուներ, տալիս էր կլոր, հարթ հացի մի կտոր, որի վրա մեր Տիրոջ պատկերն էր: Մեր հոր գնալուց մի որոշ ժամանակ անց տեսա մորս լացելիս և հասկացա, որ հայրս մյուսների հետ սպանվել է: Որոշ ժամանակ անց մյուս կանանց և երեխաներին հրամայվեց լքել գյուղը: Չար թուրքերն այնքան էին ծեծել իմ մորը, որ ճանապարհի կեսին նա հիվանդացավ և մահացավ: Ծանապարհորդության ողջ ընթացքում տեսնում էի միայն մահ և ուրիշ ոչինչ: Մեր քարավանից շատերը մահացան: Ոչինչ չկար ուտելու, խմելու, և մենք ստիպված էինք քայլել և քայլել ուժեղ արևի տակ: Ոչ մի վերջ չկար այս ամենին: Տեսնո՞ւմ եք, դեռ շատ փոքր եմ, բայց տեսել եմ բաներ, որ դուք երբեք չեք տեսել: Ողջ մնացածների հետ հասանք Հայեա, որտեղ ինձ վերցրին և իմ անունը Սիրանուշից փոխեցին Ջելիլ և տարան թրթալկան որբանոց, որտեղ ամեն առավոտ և երեկո մենք ստիպված էինք աղոթել թուրքերենով»⁵²⁵:

⁵²³ «Ճակատամարտ», 1922 - 1330:

⁵²⁴ Մելթոնյան Ռ., Աբրահամյան Մ., Նշվ. աշխ., էջ 161-162:

⁵²⁵ Գզոյան Է., Փրկություն հայ որբերին. Առաքել Չաթրյանի հուշերը, Ցեղասպանագիտական հանդես, 4 (2), Երևան, 2016, էջ 172-173:

**«ABDUCTION AND FORCED CHRISTIANIZATION OF THE
TURKISH CHILDREN» AS THE TURKISH SCIENTIFIC AND
INFORMATION FALSIFICATION**

ELINA MIRZOYAN

*Armenian Genocide Museum-Institute Foundation, Department of the
Armenian Genocide Memoirs, Documents and Press, Researcher;
Yerevan State University, Faculty of Oriental Studies, Department of Turkology,
Ph.D. in Philology, Lecturer,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to present and justify the falsification of the theory introduced in the scientific and information spheres of Turkey, according to which, during the Armenian Genocide, while rescuing Armenian children and women abducted by Muslims with the assistance and participation of Armenians, mainly the Armenian Patriarchate of Constantinople, Turkish and Kurdish Muslim children were also collected and presented as Armenians, in order to increase the numbers.

This issue is presented in the article in the context of irrefutable sources, the analysis of which confirms the groundlessness and falsity of the theory of the so-called "Christianization of the Turkish children."

In the process of our investigation, we were guided by historical-research, comparative-synthetic analytical methods, the use of which became the comprehensive and impartial argumentation of the historical reality.

As a result of the research, the conclusion was drawn that Turkish scientific and informational statements about the abduction and forced Christianization of Armenian orphans are exposed as a result of scientifically based research, becoming a falsification organized by the Turkish side, thereby distorting the actual truth about the fate of forcibly Islamized Armenian orphans and, thus, gristing to the mill of Turkish denial of the Armenian Genocide.

***Keywords:** Armenian Genocide, forced Islamization of Armenians, national identity, orphans, orphanages, Turkish falsification, Armenian Patriarchate of Constantinople.*

**«ПОХИЩЕНИЕ И НАСИЛЬСТВЕННАЯ ХРИСТИАНИЗАЦИЯ
ТУРЕЦКИХ ДЕТЕЙ» КАК ТУРЕЦКАЯ НАУЧНО-
ИНФОРМАЦИОННАЯ ФАЛЬСИФИКАЦИЯ**

ЭЛИНА МИРЗОЯН

*научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы
Фонда «Музей-Институт Геноцида армян»,
старший преподаватель кафедры тюркологии факультета
Востоковедения Ереванского государственного университета,
кандидат филологических наук,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является представить и обосновать опровержение фальсифицированных фактов, распространенных в турецких и научных информационных источниках, согласно которым при спасении похищенных мусульманами во время

Геноцида армянских детей и женщин армяне, преимущественно константинопольский Патриархат, собирали и представляли как армянских турецких и курдских детей, имея целью увеличить число армян. В турецкой научной сфере это представлено следующим образом: похищение турецких детей и их насильственная христианизация, что ставит под сомнение и отрицает насильственную исламизацию армян как факта Геноцида армян.

В рамках данного исследования проблема представлена на основании достоверных источников, анализ которых подтверждает необоснованность и фальшивость теории так называемой «христианизации» турецких детей.

В процессе изучения мы руководствовались историко-исследовательским, сравнительно-синтетическим аналитическими методами, использование которых сделало возможным всестороннюю и беспристрастную аргументацию исторических реалий.

В результате исследования мы пришли к выводу о том, что, утверждения турецких ученых о похищении и насильственной христианизации турецких сирот разоблачаются и опровергаются научными фактами как искажающие истину о насильственной исламизации армянских детей во время Геноцида и как факты, льющие воду на мельницу турецкой антиармянской пропаганды.

Ключевые слова: *Геноцид армян, насильственная исламизация армян, национальная идентичность, сироты, сиротские приюты, турецкая фальсификация, Армянский Патриархат Константинополя.*